ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ-2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 8 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի տեղակայման հարցը կարգավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքը վարձակալել է Գյումրի քաղաքի Շահինյան փողոց N 8 հասցեի շենքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 13042015-08-0020):

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով շինության վարձակալության ժամկետի երկարաձգման վերաբերյալ բաժնի պետ Էդվարդ Բաղրամյանի գրությունը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2017 թվականի փետրվարի 17-ին N 1835 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի տեղակայման նպատակով վարձակալած Գյումրի քաղաքի Շահինյան փողոց N 8 հասցեում գտնվող, քաղաքացիներ Մկրտիչ և Արմենուհի Հակոբյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող շինության (հիմք անշարժ գույքի սեփականության իրավունքների գրանցման N 2510889 վկայական) վարձակալության ժամկետը 5 (հինգ) տարի ժամկետով երկարաձգելու համար, ամսական 56000 (հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի պետ Էդվարդ Բաղրամյանին օրենքով սահմանված կարգով կնքել շինության վարձակալության պայմանագրի փոփոխման համաձայնագիր:

**Ռ. ՄԱՆՈՅԱՆ**
**Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**
**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**
**Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Կատարող՝ Ա.Հակոբյան

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ-2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 8 ՀԱՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Գյումրի համայնքը Շահինյան փողոց N 8 հասցեի շինության վարձակալության ժամկետը երկարաձգելու համաձայնություն է տալիս:

Որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի տեղակայման և հետագա համապատասխան աշխատանքային պայմանների ապահովման անհրաժեշտությամբ:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ-2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 8 ՀԱՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ավագանու << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի տեղակայման նպատակով Շահինյան փողոց N 8 հասցեի անշարժ գույքի վարձակալության ժամկետի երկարաձգմանը համաձայնություն տալու մասին >> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: